**Արձանագրություն N 14**

**ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի մրցույթի փուլի գնահատող հանձնաժողովի նիստի**

**/ՀՀ կառավարության՝ ի դեմս Ջրային կոմիտեի և «Վեոլիա Ջուր» ՓԲ ընկերության միջև 21.11.2016թ. կնքված վարձակալության պայմանագրի անկախ տեխնիկական աուդիտորական ծառայության ձեռքբերման /**

__Երկիր__

Հայաստանի Հանրապետություն

ք. Երևան 16 հունիսի 2026թ.

__Ընթացակարգ__

Անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերման բաց մրցույթի փուլ:

__Ծրագիրն իրականցնող մարմնի անվանումը__

ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե:

__Ծրագրի անվանումը__

Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված ««Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», "Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի» շրջանակներում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2031թ.թ անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերում:

__Նիստին մասնակցում էին՝__

Հանձնաժողովի նախագահ՝ Տ. Քանքանյանը,

Հանձնաժողովի անդամներ Ա. Մարգարյանը, Ա. Սիմոնյանը, Ս. Ալեքսանյանը, Ա. Առուշանյանը, Ա. Սերգոյանը և Մ. Բաբայանը:

Քարտուղար՝ Ա. Սարգսյանը:

**Հանձնաժողովի ուսումնասիրությունը**

**16.06.2026թ.**

---

Հանձնաժողովը արձանագրել է.

**Fichtner GmbH & Co. KG** կողմից ներկայացված հայտում.

1. Հրավերի Մաս 1-ինի 2.4 կետի 2.4.1 ենթակետի 4-րդ պարբերությամբ և Մաս 2-ի 2.6 կետի 4-րդ ենթակետով սահմանված, պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմի N 1.3 հավելվածով ներկայացված տվյալները որոշ դեպքերում չեն համապատասխանում Հրավերի նույն կետերով հիմնավորող՝ առաջարկվող աշխատակազմի (մասնակցետների) CV ռեզյումեներին (ինքնակենսագրական տվյալներին):

Մասնավորապես N 1.3 հավելվածի «գործատուի անվանումը» սյունակում նշված տվյալները տարբերվում են ինքնակենսագրական տվյալներից (հատկապես տեղական անձնակազմի մասնագետների տվյալներում):

2. Հրավերի Մաս 1-ինի 2.4 կետի 2.4.1 ենթակետի 4-րդ պարբերությամբ և Մաս 2-ի 2.6 կետի 4-րդ ենթակետով սահմանված որակավորումը հավաստող փաստաթղթերից, բացակայում է աշխատակազմում ներգրավված Արմեն Շահնազարյանի (Ֆինանսական մասնագետ / Սակագնային վերլուծաբան) բարձրագույն կրթությունը հիմնավորող դիպլոմը (ֆինանսական ոլորտի մասնագիտություններով բակալավրի կամ մագիստրոսի կրթական աստիճանով):

Անհրաժեշտ է անհամապատասխանությունները շտկել և ներկայացնել Հրավերով սահմանված պահանջներին համապատասխան:

3. Համաձայն Հրավերի ներկայացված չէ աշխատակազմում ներգրավված մասնագետների անձնագրերի կամ անձնագրերին փոխարինող այլ տեսակի փաստաթղթերի սկանավորված տարբերակները (Հաշվի առնելով գնահատող հանձնաժողովի 08.05.2026թ. թիվ 9-ը արձանագրությունը): Անհրաժեշտ է շտկել և ներկայացվել:

Հարկ է նշել նաև, որ **ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի VI-րդ բաժնի 26-րդ կետի 6)-րդ ենթակետով սահմանվում է.**

«6) գնահատող հանձնաժողովի անդամները և քարտուղարը պարտավոր են ապահովել մասնակիցների կողմից որպես գաղտնի նշված տեղեկությունների գաղտնիությունը և Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով պատասխանատվություն են կրում դրանց հրապարակման հետևանքով մասնակիցներին պատճառված վնասի համար՝ բացառությամբ օրենքով նախատեսված՝ պարտադիր հրապարակման ենթակա տեղեկությունների.»:

4. Fichtner GmbH & Co. KG կողմից ներկայացված տեխնիկական առաջարկում մեթոդաբանության շրջանակում հնարավոր մանրամասն տրամադրել հիմնական կատարողական ցուցանիշների գնահատման մեթոդաբանությունը, հատկապես 2022-25թ.թ. ռետրոսպեկտիվ աուդիտի գործընթացում՝ ՀԿՑ QS1 (Ջրամատակարարման շարունակականությունը քաղաքային, գյուղական տարածքներում և Երևան քաղաքում) և ՀԿՑ QS2 (Մատակարարվող ջրի որակը) մասով: Տեխնիկական առաջարկում անդրադարձ կա միայն ՀԿՑ C33 (Բաժանորդների բավարարվածություն) գնահատման վերաբերյալ:

**«Դեկոն Ինթերնեյշնել» ՍՊԸ**-ի կողմից ներկայացված հայտում.

1. Ընկերության կողմից լիազոր ներկայացուցչի լիազորագրում Ծրագրի անվանումը նշված է «Հայաստանի ջրամատակարարման և ոռոգման ծառայությունների բարելավման ծրագիր-Ծրագրի 1-ին փուլ»:

ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ (WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի Ծրագրի անվանումն է «Հայաստանի Հանրապետության էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության ջրային տնտեսության պետական կոմիտեի և «Վեոլիա Ջուր» փակ բաժնետիրական ընկերության միջև 2016 թվականի նոյեմբերի 21-ին կնքված ««Երևան ջուր», «Հայջրմուղկոյուղի», «Լոռի-ջրմուղկոյուղի», «Շիրակ-ջրմուղկոյուղի» և «Նոր Ակունք» փակ բաժնետիրական ընկերությունների կողմից օգտագործվող ու պահպանվող ջրային համակարգերի և այլ գույքի վարձակալության պայմանագրի» շրջանակներում «ՎԵՈԼԻԱ ՋՈՒՐ» փակ բաժնետիրական ընկերության 2022-2031թ.թ անկախ տեխնիկական աուդիտորական ծառայությունների ձեռքբերում»: Անհրաժեշտ է Ծրագրի անվանումը շտկել:

2. Տեխնիկական առաջարկի՝ «Հանձնարարության ընկալումը, Պայմանագրային շրջանակը և Վերջնական վիճակի հետազոտություն» բաժիններում (հայերեն տարբերակի 70 և 72-րդ էջեր) ուղղել գերատեսչության անվանումը՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության ջրային կոմիտե, ինչպես նաև խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման (կեղտաջրերի մաքրման) ծառայություններ մատուցող ընկերությունը՝ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ:

3. Բացակայում է նաև Հրավերով պահանջվող Պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմում ներգրավված Ալիսա Սավադյանի որակավորումը՝ (Դիպլոմ՝ բնապահպանության ոլորտի մասնագետի կամ քիմիայի բնագավառի բակալավրի կամ մագիստրոսի կրթական աստիճանով) հավաստող փաստաթուղթը, ինչպես նաև բացակայում է Պայմանագրի կատարման համար առաջարկվող աշխատակազմում ներգրավված Հեղինե Գրիգորյանի որակավորումը հավաստող փաստաթուղթը (Դիպլոմ՝ իրավագիտության բակալավրի կամ մագիստրոսի կրթական աստիճանով), անձնագրի սկանավորված օրինակը և ինքնակենսագրական տվյալներում (CV) նշված չէ վերջինիս ծննդյան տարեթիվը:

**Հիմք ընդունելով ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ((WC-SPOT-26/1-TA) ծածկագրով ընթացակարգի հայտարարության 8.8-րդ կետը հանձնաժողովը մեկ աշխատանքային օրով կասեցնում է նիստը, (որի մասին հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային եղանակով կտեղեկացնի մասնակցին) առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ այն է 17.06.2026թ շտկել անհամապատասխանությունը:**

**Ծանոթություն**

Համաձայն **ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ((WC-SPOT-26/1-TA) ծածկագրով հրավերի** 8.9-ը կետի՝ «Եթե սույն հրավերի 8.8-րդ կետով սահմանված ժամկետում մասնակիցը շտկում է արձանագրված

անհամապատասխանությունը, ապա վերջինիս հայտը գնահատվում է բավարար: Հակառակ դեպքում տվյալ մասնակցի հայտը գնահատվում է անբավարար և մերժվում է, իսկ ընտրված մասնակից է ճանաչվում հաջորդող տեղ զբաղեցրած մասնակիցը:»:

Համաձայն **ՋԿ-ԲՄԾՁԲ-26/1-ՏԱ ((WC-SPOT-26/1-TA) ծածկագրով հրավերի** 8.13-ը կետի՝ Ընդ որում.

«-եթե մասնակցի գնումներին մասնակցելու իրավունք ունենալու մասին դիմում-հայտարարությունը որակվում է որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը սույն հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ներառյալ այն դեպքերը, երբ սահմանված ժամկետում չի շտկում կամ ամբողջական չի շտկում հայտի գնահատման արդյունքում արձանագրված անհամապատասխանությունները, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում մասնակցի ստանձնված պարտավորության խախտում.»:

**Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը հաստատելու մասին:**

---

Գնահատող հանձնաժողովի հաջորդ նիստը հրավիրել ըստ անհրաժեշտության, որը տեղի կունենա Ջրային կոմիտեի վարչական շենքում, հասցեն՝ ք. Երևան, Վարդանանց 13ա:

Ընդունվել է որոշում՝ կողմ-7, դեմ-0

Գնահատող հանձնաժողովի՝

| | | |
|---|---|---|
| Նախագահ | ______________ | Տ. Քանքանյան |
| անդամներ | ______________ | Ա. Մարգարյան |
| | ______________ | Ա. Սիմոնյան |
| | ______________ | Ա. Առուշանյան |
| | ______________ | Ս. Ալեքսանյան |
| | ______________ | Մ. Բաբայան |
| | ______________ | Ա. Սերգոյան |
| Քարտուղար | ______________ | Ա. Սարգսյան |